

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԳԻՏՆԼԻՔՆԵՐԻ ՏԱՐԱՆՄԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Իրավաբանական գիտությունների թեկնածու
Ա. Ղ. ԵՍԱՅԱՆ

ԱՄԵՐԻԿԱՆ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԸ
ԱԶԳԱՅԻՆ ՍՈՒՎԵՐԵՆՈՒԹՅԱՆ
ԹԾՆԱՄԻՆ Է

Երևանում կարդացած հրապարակային
դասախոսության սղագրությունը

ԵՐԵՎԱՆ

1949

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Խաղաղամական գիտությունների բեկնածու

Ա. Գ. Ե Ս Ա Յ Ա Ն

322(73)

ՍՏՈՒԴՎԱԾ Է 1961 թ.

ԱՄԵՐԻԿԱՆ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԸ ԱԶԳԱՅԻՆ
ՍՈՒՎԵՐԵՆՈՒԹՅԱՆ ԹՇՆԱՄԻՆ Է

Երևանում կարդացած հրապարակային
դասախոսության տղագրությունը



Ամերիկյան «տնտեսական օգնության» էությունը	էջ 3
Ամերիկյան «տնտեսական օգնությունը», նրա հետևանքները և պետու- թյունների ազդեցին սոցիալիզմի հարցը	10
Սոցիալիզմի պատմական զարգացումը և ամերիկյան խմայնիալիզմի հարձակումը նրա դեմ	21
ՍՍՌՄ-ի պայքարը հանում սոցիալիզմի և տնտեսական համագործակ- ցության սովետական սկզբունքները	27

A $\frac{11}{9918}$

Канд. юрид. наук
А. ЕСАЯН

Американский империализм

враг национального суверенитета

(На армянском языке)

Ереван, 1949 г.

ԱՄԵՐԻԿԱՆ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ» ԷՈՒԹՅՈՒՆԸ

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո անցած ժամանակաշրջանը պատմության մեջ մտավ որպես համաշխարհային առաքարեզում գործող քաղաքական ուժերի արագ, աննախընթաց բեռնացման շրջան: Պատերազմի հետևանքով տեղի ունեցած արմատական փոփոխություններն ավարտվեցին միջազգային առաքարեզում գործող հիմնական ուժերի երկու լագերի բաժանմամբ՝ մի կողմից խմբերիալիստական ու հակադեմոկրատական լագերի և մյուս կողմից հակախմբերիալիստական ու դեմոկրատական լագերի:

«Խմբերիալիստական լագերի հիմնական նպատակն է՝ ամրապնդել խմբերիալիզմը, նախապատրաստել նոր խմբերիալիստական պատերազմ, պայքարել սոցիալիզմի ու դեմոկրատիայի դեմ և ամենուրեք — պաշտպանել ռեակցիոն և հակադեմոկրատական պրոֆաշիստական ռեժիմներն ու շարժումները»^{*}): Դեմոկրատական լագերը հետապնդում է միանգամայն այլ նպատակներ, որոնք ընդհանուր ոչինչ չունեն խմբերիալիստական լագերի հետապնդած նրապատակների հետ: Դեմոկրատական լագերի նպատակն է՝ պայքար մղել նոր պատերազմի սպառնալիքի և խմբերիալիստական ամեն կարգի էքսպանսիաների դեմ, ամրապնդել դեմոկրատիան և արմատախիլ անել ֆաշիզմի ամեն գույնի մնացորդները:

Անցած ժամանակաշրջանը պարզորոշ կերպով ցույց տվեց, որ սովետական պետության կողմից գլխավորվող հակախմբերիալիստական ու դեմոկրատական լագերի մեջ մտնող պետություններն իրենց արտաքին քաղաքականությունն ի սպաս են դրել ժողովուրդների միջև հարատև դեմոկրատական խաղաղություն հաստատելու, նրանց իրավահավասարությունն ու սոցիալիզմի շրջանը հարգելու բա-

^{*}) Տես Ա. Ա. Ժգանովի գեկուցումը միջազգային դրության մասին, «Պարտիական կյանք» ամսագիր № 5, 1947 թ., Երևան:

զայի վրա միջադգային քաղաքական ու տնտեսական համագործակցության դործի համար: Այս վեհ նպատակներին հասնելու համար դեմոկրատական լազերն անդադրում պայքարել ու պայքարում է ֆաշիզմի մնացորդները լիկվիդացնելու, ֆաշիստական իմպերիալիստական ագրեսիայի վերածնունդը կանխելու, սպառազինության ընդհանուր կրճատման, խաղաղ բնակչության մասսայական ոչնչացմանը ծառայող զենքի առավել կործանիչ տեսակներն՝ արգելելու համար: Սովետական պետությունը դեմոկրատական լազերի գլուխ կանգնած, խաղաղության համար մղված պայքարում ելնում է երկարատև ժամանակաշրջանում երկու սխառեմների՝ սոցիալիզմի և կապիտալիզմի համակեցության հնարավորությունից, այդ երկու սխառեմների մեջ մտնող երկրների միջև համագործակցության հնարավորության փաստից, փոխադարձության սկզբունքը պահպանելու և առանձնաժ պարտավորությունները կատարելու պայմանով:

Իմպերիալիստական-հակադեմոկրատական լազերը՝ ԱՄՆ-ի դիկտավորությամբ իր քաղաքականությունը կառուցում է ժողովուրդներին նոր պատերազմի մեջ ներդրավելու ավանտյուրիստական պլանների վրա: Այս ճանապարհին ամերիկյան իմպերիալիզմը ու նոր պատերազմի նրա ջատագովները՝ ընդհանուր խաղաղությունը վիժեցնելու, ֆաշիզմը վերածնելու, բոլոր երկրներում դեմոկրատիան խալառ վերացնելու համար կատարում են ամեն ինչ, ինչ կարող են: Անգլո-ամերիկյան իմպերիալիստները բռնել են նախօրոք ստանձնած պարտավորություններից հրաժարվելու, ժողովուրդներին մեկը մյուսի դեմ լարելու, ամերիկյան իմպերիալիզմի համաշխարհային տիրապետությունը հաստատելու համար ուրիշ ժողովուրդներին ստրկացնելու ճանապարհը:

Ինչպես ասվում է ՍՍՌՄ Արտաքին Գործերի մինիստրության հայտարարության մեջ՝ «Միացյալ Նահանգների և Մեծ Բրիտանիայի կառավարող շրջաններն անցել են բացահայտ ագրեսիվ քաղաքական կուրսի, որի վերջնական նպատակն է բռնի կերպով հաստատել անգլո-ամերիկյան համաշխարհային տիրապետություն, որին և համապատասխանում է նրանց կողմից կիրառվող ագրեսիայի քաղաքականությունը, նոր պատերազմ հրահրելու քաղաքականությունը»^{*}):

^{*}) Տես «Սովետական Հայաստան» թերթի 1949 թվի հունվարի 30-ի համարը:

Այս ագրեսիվ քաղաքականությունը առաջին հերթին նպատակ ունի մեկուսացնել ՍՍՌՄ-ն ու ժողովրդական դեմոկրատիայի երկրները և նրանց շուրջն ու նրանց դեմ կազմակերպել ամեն կարգի ռազմական խմբավորումներ:

Քաղաքական ու տնտեսական ճնշման զսպանակները սեղմելով, ԱՄՆ-ի և նրա դաշնակից Անգլիայի կառավարող շրջանները միավորում են կապիտալիզմի բոլոր ուժերը սոցիալիզմի ու դեմոկրատիայի դեմ խաշակրած արշավանքի դուրս գալու համար: Նոր պատերազմի անգլո-ամերիկյան հրձիգներն իրենց ագրեսիվ քաղաքականությունն իրագործելու համար ձգտում են, որ «իրենց ձեռքը վերցնեն որքան կարելի է ավելի շատ պետությունների սանձը, նրանց զրկելով ազգային փնջնուրույն արտաքին ու ներքին քաղաքականություն՝ վարելու հնարավորությունից և այդ պետություններն օգտագործելով որպես օժանդակ միջոց իրենց ագրեսիվ պլանների իրագործման գործում, որոնց նպատակն է հաստատել անգլո-ամերիկյան համաշխարհային տիրապետություն»^{*)}: ՍՍՌՄ-ի և ժողովրդական դեմոկրատիայի երկրների դեմ զինված արշավանք նախապատրաստելու ամերիկյան իմպերիալիզմի վերջին «հայտնագործությունը» այսպես կոչված Հյուսիս-Ատլանտյան պակտն է, քստ որի մեկ ընդհանուր իմպերիալիստական լագերում միավորվում են ԱՄՆ-ը, Անգլիան, Ֆրանսիան և ԱՄՆ-ի կլիենտ հանդիսացող այլ երկրներ:

Ատլանտյան պակտի հակասովետական էությունը ակնհայտ է թեկուզ հենց այն պատճառով, որ այդ պակտին մասնակցելու համար նախատեսվում է «համագործակցության» հրաժիրել նաև Ֆրանկոյական Իսպանիային ու «դեմոկրատական» Թյուրքիային: Բայց ինչպես Արևմտյան դաշինքին, այնպես էլ Ատլանտյան պակտին բացառվում է ժողովրդական դեմոկրատիայի երկրների և Առևտրական Միության մասնակցության հնարավորությունը: Պարզ ու հասկանալի է դառնում, որ կապիտալիստական երկրներում կազմակերպված ու կազմակերպվող ամեն կարգի խմբավորումները հանդիսանում են Հյուսիս-Ատլանտյան պակտի իմպերիալիստական նպատակների իրագործման օղակները: Այժմ միանգամայն ակնհայտ է «որ Արևմտյան դաշինքը, և պետությունների միջամերիկյան

^{*)} Տես «Մովսեսական Հայաստան» թերթի 1949 թվի հունվարի 30-ի համարը:

խմբավորումը, ինչպես նաև միջերկրածովյան պետութիւնների, Սկանդինավյան երկրների, Հարավ-Արևելյան Ասիայի երկրների ներկայումս նախապատրաստվող պակտերը սերտորեն կապված են Հյուսիս-Ատլանտյան պակտի նպատակների իրականացման հետ, մի պակտ, որը ուղղութիւն տվող նշանակութիւն ունի տիրապետութիւն հաստատելու անգլո-ամերիկյան պլանների համար և՛ Արևմտյան Եվրոպայում, և՛ Հյուսիսային Ատլանտիկայում, և՛ Հարավային Ամերիկայում, և՛ Միջերկրական ծովում, և՛ Ասիայում, և՛ Աֆրիկայում, և՛ ամենուրեք, որտեղ միայն հասնեն նրանց ձեռքերը»*):

1949 թ. ապրիլի 4-ին Վաշինգտոնում ստորագրված «Հյուսիս-Ատլանտյան պայմանագրի տեքստը լիովին հաստատեց այն, ինչ ասված է ՍՍՌՄ Արտաքին Գործերի մինիստրութեան ս/թ. հունվարի 29-ի հայտարարութեան մեջ...»**): Այս պայմանագրի բովանդակութիւնը պարզորոշ կերպով խոսում է այն մասին, որ ԱՄՆ-ի, Անգլիայի ու Ֆրանսիայի կառավարութիւնների ճիգերը՝ ցույց տալու թե իրենք պաշտպանողական բնույթի պայմանագիր են կնքել, իհարկե միանգամայն կեղծ են ու նպատակ ունեն մոլորութեան մեջ գցել միամիտ մարդկանց:

Եվ իսկապես, ո՞ւմնից պետք է պաշտպանվեն ԱՄՆ-ը, Անգլիան և Ֆրանսիան: Չէ որ իրենք են մտնում Հյուսիս-Ատլանտյան պակտի մեջ: Այդ հարցի պատասխանը սպառիչ կերպով տրված է ՍՍՌՄ կառավարութեան կողմից Հյուսիս-Ատլանտյան պայմանագրի մասին ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Կանադայի և Բենիլյուքսի պետութիւնների կառավարութիւններին ուղարկված հայտնի հուշագրի մեջ: «Հյուսիս-Ատլանտյան պայմանագրի մասնակիցներն այնպիսի մեծ տերութիւններ են, ինչպես Միացյալ Նահանգները, Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան: Այսպիսով պայմանագիրն ուղղված չէ ոչ Ամերիկայի Միացյալ Նահանգների դեմ, ոչ Մեծ Բրիտանիայի դեմ, ոչ էլ Ֆրանսիայի դեմ: Մեծ տերութիւններից միայն Սովետական Միութիւնն է բացառված այդ պայմանագրի մասնակիցների թվից, որը կարելի է բացատրել միայն նրանով, թե այդ պայմանագիրն ուղղված է

*) Տե՛ս «Սովետական Հայաստան» թերթի 1949 թ. հունվարի 30-ի համադր»

***) Տե՛ս «Սովետական Հայաստան» թերթի 1949 թ. ապրիլի 2-ի համադր»

Սովետական Միության դեմ... վերջին պատերազմում Միացյալ Նահանգների, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի դիտավոր դաշնակիցներից մեկի՝ ՍՍՌՄ-ի դեմ*):

Հյուսիս-Ատլանտյան պայմանագիրը, այդ պատերազմի պայմանագիրն ուղղված լինելով Սովետական Միության և Ժողովրդական դեմոկրատիայի երկրների դեմ «նպատակ ունի ահաբեկել այն պետություններին, որոնք համաձայն չեն ենթարկվելու համաշխարհային տիրապետության հավակնություն ունեցող տերություններին անգլո-ամերիկյան խմբավորման թելադրանքին, թեև նմանօրինակ հավակնությունների անհիմն լինելը կրկին անգամ հաստատեց երկրորդ համաշխարհային պատերազմը, որն ավարտվեց նույնպես համաշխարհային տիրապետության հավակնություն ունեցող ֆաշիստական Գերմանիայի ջախջախմամբ»**):

Հյուսիս-Ատլանտյան պակտն ուղղված է խաղաղության ու դեմոկրատիայի դեմ և քայքայում է Միավորված Ազգերի կազմակերպության բուն հիմքերը: Այդ մասին է խոսում թեկուզ և Հյուսիս-Ատլանտյան պայմանագրի 5-րդ հոդվածը, որը նախատեսում է պայմանագրի մասնակիցների կողմից զինված ուժի գործադրումն առանց Անվտանգության հորհրդի որևէ լիազորության մի բան, որը հիմնովին հակասում է ՄԱԿ-ի կանոնադրության 53-րդ հոդվածին:

Հյուսիս-Ատլանտյան պայմանագրի մասին ՍՍՌՄ կառավարության հուշագրի արտասահմանյան առաջադիմական մամուլի արձագանքները վկայում են, որ սովետական կառավարության հուշագիրն ամբողջ աշխարհի ազատատենչ մարդկանց և առաջին հերթին աշխատավորական լայն մասսաների հուշագիրն է ուղղված պատերազմի հրձիգների դեմ:

«Ովքեր երազում են «սառը պատերազմը» վեր ածել իսկական պատերազմի, — գրում է լեհական «Տրիբունա լյուդու» թերթը, — դառն կերպով կսխալվեն իրենց հաշիվներում: Նրանց պլանները տապալող կարևորագույն գործոն հանդիսանում է Սովետական Միության քաղաքականությունը: Հենց այդ պատճառով այսօր դեպի Նոսկվա են ուղղված միլիոնավոր մարդկանց հայացքները: Այնտեղից լսվում է խաղաղության ձայնը: Այնտեղից է հնչում

*) Տես «Սովետական Հայաստան» թերթի 1949 թ. ապրիլի 2-ի համարը:

**) Նույն տեղում:

հույսի ձայնը: Նա ով իր հույսերը կապում է Մոսկվայի հետ, չի սխալվի»^{*}):

Զեխոսլովակյան «Ռուդե պրավո» թերթը մատնանշում է, որ «ամբողջ մարդկության ճնշող մեծամասնությունը հանձին Սովետական Միության տեսնում է իր բարեկամին ու պաշտպանին: Ամբողջ աշխարհի միլիոնավոր հասարակ մարդիկ սովետական կառավարության հուշագիրը համարում են իրենց հուշագիրը»^{**}):

Սովետական հուշագրի մեջ շարադրված է սովետական կառավարության եզրակացությունը Հյուսիս-Ատլանտյան պակտի մասին և սահմանում է, որ այդ պայմանագիրը՝ 1) ինքնապաշտպանության հետ ընդհանուր ոչինչ չունի, բացարձակ կերպով ազդեցիկ է և ուղղված է ՄՍՌՄ-ի դեմ, 2) հակասում է ՄԱԿ-ի կանոնադրության սկզբունքներին ու նպատակներին և Միավորված Ազգերի կազմակերպությանը տանում է դեպի քայքայում, 3) հակասում է Մեծ Բրիտանիայի և Սովետական Միության միջև 1942 թ. կնքված պայմանագրին, որով կողմերը պայմանավորվել են «չկնքել որևէ դաշինք ու շփանակցել որևէ կոալիցիայի, որոնք ուղղված են պայմանավորվող կողմերից մեկի դեմ», 4) հակասում է Ֆրանսիայի և Սովետական Միության միջև 1944 թ. կնքված պայմանագրին, որը կողմերին պարտավորեցնում է «չկնքել որևէ դաշինք ու շփանակցել որևէ կոալիցիայի, որն ուղղված է բարձր պայմանավորվող կողմերից մեկի դեմ», 5) հակասում է Յալթայի և Պոտսդամի կոնֆերանսներում և մյուս Խորհրդակցություններում Սովետական Միության, Ամերիկայի Միացյալ Նահանգների և Մեծ Բրիտանիայի միջև կնքված պայմանագրերին, ըստ որոնց ՄՍՌՄ-ը, ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան պարտավորություններ են ստանձնել «համագործակցել ընդհանուր խաղաղության և միջազգային անվտանգության ամրապնդման գործում և նպաստել Միավորված Ազգերի կազմակերպության ամրապնդմանը»:

Ամերիկյան իմպերիալիզմը, աշխարհին տիրելու նոր հավակնորդը իր ուղիմա-քաղաքական էքսպանսիայի հետ զուգակցում է տնտեսական էքսպանսիան, իր իմպերիալիստական օրբիտի մեջ ներգրաված սուվերեն պետությունները վերածելով ամերիկյան պրոտեկտորատների ու կիսագաղութների: Ամերիկյան իմպերիա-

^{*}) Տե՛ս «Սովետական Հայաստան» թերթի 1949 թվի ապրիլի 5-ի համարը:

^{**}) Տե՛ս «Սովետական Հայաստան» թերթի 1949 թ. ապրիլի 6-ի համարը:

լիստական ազրեսիվ քաղաքականութեան մեջ ներգրավված պե-
տութեաններին բաժին ընկած այդ մոայլ բախտը վիճակվել է նաև
խմայերիալիստական Անգլիային, որն Ուոլ-Ստրիտին ծառայու-
թյուններ մատուցելու դերում «այնքան քիչ հեռու չէ «Ամերիկայի
49-րդ նահանգի» տխրահռչակ դերից»:

Ամերիկյան խմայերիալիզմն իր համաշխարհային տիրապե-
տութեանը հաստատելու կարևորագույն նախապայմանն է համա-
րում պետութեաններին իրենց ինքնուրույնութեանից զրկելը, ներ-
քին ու արտաքին քաղաքականութեան ասպարեզում ոտնահարելով
ու հողին հավասարեցնելով նրանց ազգային սուվերենութեանը:
Ազգային սուվերենութեանն ամերիկյան տնտեսական էքսպանսիա-
յի ճանապարհին կանգնած մեծ խոչընդոտներից կարևորներից
մեկն է, ուստի և պետութեաններին սուվերենութեանից զրկելը նա
դիտում է որպես համաշխարհային տիրապետութեան հաստատե-
լու նախապայմաններից մեկը: Այս գործում ամերիկյան խմայե-
րիալիզմին օգնության է հասնում ժամանակակից բուրժուական
ռեակցիոն իրախաղիտութեանը սուվերենութեան մասին իր հորի-
նած նոր «տեսութեաններով», տեսութեաններ, որոնք կոչված են
«գիտականորեն» հիմնավորելու ամերիկյան խմայերիալիզմի առաջ
պետութեանների ազգային սուվերենութեանը զոհաբերելու ան-
հրաժեշտութեանը, ազգային սուվերենութեանը որպես ամերիկյան
ռազմական ու տնտեսական էքսպանսիայի ճանապարհին կանգ-
նած պատնեշի ասպարեզից հանելու անհրաժեշտութեանը:

Այսպիսով «ԱՄՆ-ի տնտեսական էքսպանսիան կարևոր լրա-
ցում է հանդիսանում ստրատեգիական պլանի իրագործման մեջ:
Ամերիկյան խմայերիալիզմը ձգտում է որպես վաշխառու օդաչու-
ծել էվրոպական երկրների ետպատերազմյան դժվարութեանները,
մասնավորապես հոմքի, վառելանյութի և պարենամթերքի պակա-
սութեանը պատերազմից առավելապես տուժած դաշնակից երկր-
ներում, որպեսզի օգնության իր ստրկական պայմանները թելա-
դրի նրանց: Առաջիկա տնտեսական ճգնաժամը կանխատեսելով,
ԱՄՆ-ը շտապում են դառնել կապիտալի ներդրման և ապրանքների
վաճառահանման նոր մոնոպոլ սֆերաներ: ԱՄՆ-ի տնտեսական
«օգնութեանը» հետապնդում է ամերիկյան կապիտալի կողմից
Եվրոպան ստրկացնելու լայն նպատակ: Որքան ավելի ծանր է

հանդիսանում այս կամ այն երկրի տնտեսական դրուժյունը, այն-
քան ավելի դաժան պայմաններ են ձգտում թելադրել նրան ամե-
րիկյան մոնոպոլիստները»*):

**ԱՄԵՐԻԿԱՆ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ», ՆՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ
ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌՎԵՐՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ**

Ամերիկյան «տնտեսական օգնության» քննության, նրա ունի
հետևանքների մասին պարզ պատկերացում ունենալու համար
փորձենք վերլուծել ամերիկյան իմպերիալիզմի կառքին լծված մի
շարք պետությունների և ԱՄՆ-ի միջև կնքված երկկողմանի «տն-
տեսական օգնության» վերաբերյալ համաձայնագրերը ու ծանո-
թանա՞նք վերջինները կյանքում կիրառելու հետևանքների հետ:

«Ամերիկյան օգնության» առաջին «բարիքները» բաժին ընկան
Անգլիային: 1946 թվին ԱՄՆ-ի կողմից Անգլիային տրամադրված
փոխառության պայմանների համաձայն անգլիական կառավարու-
թյունն ստիպված էր իր վրա պարտավորություն վերցնել աջակցելու
ԱՄՆ-ի նախաձեռնությանը, որը կոչված է «թուլացնելու առևտրա-
կան ամեն կարգի արգելագծերը», հաստատել Բրետոն-Վուդսոնում
ԱՄՆ-ի շահերին համապատասխան մշակված ֆինանսական համա-
ձայնագիրը, որը Անգլիային զրկում է ստերլինգի պարիտետի ինք-
նուրույն կարգավորման իրավունքից, ինչպես նաև մեղմացնել Անգ-
լիայում գործող արժույթային սահմանափակումները:

Անգլիան՝ ստացվող փոխառության համար միաժամանակ
պարտավորվեց թույլ չտալ, որևէ կարգի խտրականություն ԱՄՆ-ից
կատարվող ներմուծումների նկատմամբ: Գործնական լեզվով ա-
սած, այս նշանակում է, որ Անգլիան զրկվեց օտարերկրյա պետու-
թյուններում և իր սեփական դոմինիոններում ֆունտ ստերլինգով ա-
վելի ցածր գներով գնումներ կատարելու իրավունքից, եթե նա հա-
մապատասխան գնումներ չի կատարում ԱՄՆ-ում՝ դոլարներով: Այս
կերպ ասած, անգլիական կառավարությունը ԱՄՆ-ից դոլարներ ըս-
տանալու համար իր տնտեսական սուվերենությունը սահմանափա-
կեց ելելու ուղղությամբ՝ արտաքին առևտրի և արժույթների քա-
ղաքականության ասպարեզում: ԱՄՆ-ի կողմից Մարշալի պլանի
համաձայն Անգլիային ցույց տրվող «տնտեսական օգնությունը»

*) Տես Ա. Ա. Ժգանովի ղեկուցումը միջազգային դրուժյան մասին, «Պար-
տիական կյանք» ամսագիր № 5, էջ 20, 1947 թ.:

խորացրեց Անգլիայի տնտեսական ու քաղաքական կախումը ԱՄՆ-ից: ԱՄՆ-ից «տնտեսական օգնություն» ստացող արևմտա-եվրոպական պետությունների թվում Անգլիան գրավում է առաջին տեղը: Ամերիկյան «օգնությունը» Անգլիային և մյուսներին կաղմակերպվեց ոչ առանց Անգլիայի ռեակցիոն իմպերիալիստական շրջանների ստորաքարշ ծառայության ԱՄՆ-ին: Մինչև Մարշալի պլանի ձևերի գալը ԱՄՆ-ի անգլիական կամակատարները իրենք էին կոշանում վճռականություն ցուցաբերել ամերիկյան «օգնության» ըստանալու մեջ եվրոպական համառության ցուցաբերող պետությունների դեմ: Անգլիական ազդեցիկ պարբերական «էկոնոմիստը» գրում էր «եթե ճանապարհին կանգնած դժվարությունները կայանում են եվրոպացիների անմիտ համառության մեջ, այդ դեպքում ԱՄՆ-ը թող օգտագործեն իրենց մեծ ուժը նրա համար, որպեսզի նրանց (եվրոպական պետություններին — Աղ. Նս.) ստիպեն համաձայնագրեր ստորագրելու»*):

ԱՄՆ-ի և արևմտա-եվրոպական պետությունների միջև կրնալիս ձևերկրողմանի համաձայնագրերի տեքստերը պարզ լույս են ափռում Մարշալի պլանի համաձայն տնտեսական «օգնություն» ստացող երկրների և ԱՄՆ-ի փոխհարաբերությունների իրական էության վրա: Այդ համաձայնագրերն իրենցից ներկայացնում են ամերիկյան տիրոջ և նրա եվրոպական հպատակների փոխադարձ հարաբերությունների իրավաբանական ձևակերպումը, ըստ որում ամերիկյան «բարերարը» իր կլիենտներից պահանջում է շատ «համեստ» վարձատրություն՝ ազգային սուվերենության սահմանափակում, որը քաղաքական լեզվով նշանակում է ընդարձակ ճանապարհ բացել ամերիկյան իմպերիալիզմի քաղաքական ու տնտեսական էքսպանսիայի համար: Այդ մասին է խոսում ԱՄՆ-ի կողմից մյուս պետություններին թելադրված «երկկողմանի» համաձայնագրերի բովանդակությունը: Այսպես օրինակ՝ ԱՄՆ-ի և Ֆրանսիայի միջև կնքված երկկողմանի համաձայնագրի պայմանները տիպիկ են մյուս երկրների հետ կնքված համաձայնագրերի համար: Ֆրանս-ամերիկյան համաձայնագրի առաջին հոդվածը նախատեսում է, որ ապրանքների գնումը Ֆրանսիայի կողմից «Միացյալ Նահանգների տերիտորիայից դուրս չպետք է

*) „Большевик“ № 15, стр. 15, 1947 г.

վնասեն Միացյալ Նահանգների առևտրական շահերին»։ Իսկ այդ նշանակում է, որ ամերիկյան մոնոպոլիստները Ֆրանսիային կարող են արգելել առևտուր անել որևէ այլ երկրի հետ։ Իսկույ չէ, որ Ֆրանսիական մամուլը գրում է, թե ամերիկացիներն ստիպում են քարածուխ գնել տոննան 20 դոլարով, այն դեպքում, երբ Ֆրանսիան կարող է քարածուխ ստանալ տոննան 12 դոլարով։

ԱՄՆ-ի և Ֆրանսիայի միջև կնքված համաձայնագրի երկրորդ հոդվածը սահմանում է, որ «այդ համաձայնագրի հաշվին մատակարարվող մթերքները և շինվածքները պետք է օգտագործվեն համաձայնագրին համապատասխանող նպատակների համար, ինչպես նաև հատուկ նպատակների համար, որոնք կարող են մատնանշվել Միացյալ Նահանգների կառավարության կողմից»։ Այդ նշանակում է, որ Ֆրանսիական կառավարությունը իրավասու չէ իր երկրում տնորինելու ներմուծված ապրանքները, այլ ենթակա է ամերիկյան կառավարության մշտական թելադրանքին։

Այնուհետև, համաձայնագրում ասված է, որ Ֆրանսիան պարտավոր է Ամերիկայի Միացյալ Նահանգներին մատակարարել վերջինիս անհրաժեշտ ստրատեգիական նշանակություն ունեցող հումք։ Այսպիսով ստացվում է այնպես, որ ի վնաս Ֆրանսիայի ազգային անվտանգության, նրա ժամանակակից ամերիկյան դրածուները Ֆրանսիայում և նրա անդրծովյան տերիտորիաներում եղած բոկսիտները, նավթը, նիկելը, խրոմը դնում են Վաշինգտոնի լիակատար տրամադրության տակ։

Համաձայնագրի 6-րդ հոդվածը Ֆրանսիական կառավարությանը պարտավորեցնում է «անհրաժեշտ հովանավորություն ցույց տալ Միացյալ Նահանգների բոլոր քաղաքացիներին» և «ամերիկյան օրենքներով ստեղծված վտանգներին, ընկերություններին, ասոցիացիաներին»։ Ֆրանսիական կառավարությունը պետք է նրանց բոլորի համար «ապահովի ազատ մուտք Ֆրանսիական աղբյուրների շահագործմանը Ֆրանսիական քաղաքացիների հավասար իրավունքներով»։ Ֆրանսիական կառավարության, այս պարտավորությունը համալրվեց վերջերս ԱՄՆ-ի և Ֆրանսիայի միջև կնքված այն համաձայնագրերով, ըստ որի ամերիկյան քաղաքացիները Ֆրանսիա կարող են ժամանել առանց վիզայի։

Ամերիկյան «հավասար հնարավորությունների» պահանջը վաղուց ծանոթ է եվրոպական ժողովուրդներին։ «Հավասար հնա-

քաղաքացիականության տիրապետության այդ քարոզն օգտագործվելու օգտագործվում է ամերիկյան մոնոպոլիստների տրեստական ու քաղաքական էքսպանսիան դիվանագիտական ճանապարհով իրագործելու համար: Այն ինչ իմպերիալիստական ԱՄՆ-ը կիրառել են գաղութային ու կիսագաղութային երկրների նկատմամբ, այժմ ամբողջովին փաթաթում են եվրոպական ժողովուրդների վրին: Չէ որ ժամանակակից Ֆրանսիայի տնտեսության և ոչ մի ճյուղ իր ֆինանսական հնարավորություններով չի կարող քաղաքականել ամերիկյան մոնոպոլիստների հետ: Ֆրանսիայում «հավատար հնարավորությունների» ամերիկյան արտոնագրով բացված ամեն մի կոմպանիա իր հսկայական ֆինանսական գերակշռությամբ հեշտորեն կարող է ու արդեն ճգնում է իր ֆրանսիական մրցակցին: Պատահական չէ, որ ֆրանսիական առաջադեմ հասարակայնությունը մեծ վրդովմունքով դիմավորեց ԱՄՆ-ի և Ֆրանսիայի միջև կնքված այդ երկկողմանի համաձայնագիրը, այն անվանելով «Ֆրանսիան գաղութացնելու համաձայնագիր»:

Այդ դեռ բոլորը չէ, ամերիկյան տերերը համաձայնագրի Ց-րդ հոդվածի ուժով ֆրանսիական կառավարությանը պարտավորեցնում են Միացյալ Նահանգներին ինֆորմացիա տալ Ֆրանսիայի էկոնոմիկայի և այլնի վերաբերյալ:

Այսպիսով Ֆրանսիան պարտավոր է ամերիկացիներին տալ տնտեսական բնույթի ամեն կարգի տեղեկություններ, բնդհուպ մինչև արտադրական գաղտնիքի բնույթի տեղեկությունները: Այլ կերպ ասած, համաձայնագիրը դռները լայն բացում է ամերիկյան տնտեսական լրտեսության առաջ, իսկ ֆրանսիական կառավարությունը ոչ միայն իրավունք չունի արգելք հանդիսանալու Ֆրանսիայի էկոնոմիկան քայքայող այդ գործունեությանը, այլև պարտավոր է ամեն կերպ աջակցել ու օգնել ԱՄՆ-ին նրանց այդ քայքայիչ գործում: Դժվար չէ նկատել, որ ֆրանսիական կառավարությունն ԱՄՆ-ի առաջ վերցրած իր պարտավորությունների ծավալով ու էությամբ ավելի շատ կախման մեջ է գտնվում Վաշինգտոնից, քան թե ամերիկյան որևիցե կոմպանիա: Ինչ խոսք, որ ֆրանսիական տնտեսական սուվերենությունը հարգելու մասին խոսք լինել չի կարող: Ընդհակառակը, ֆրանսիական կառավարության պարտավորությունները Վաշինգտոնի առաջ խոսում են այն մասին, որ ֆրանսիական կառավարող ղեակցիոն շրջաններն իրենց

էգոիստական շահերից ելնելով վաճառքի են հանել Ֆրանսիայի ազգային սուվերենութիւնը, նրա ազգային անկախութիւնը:

Բնորոշ է, որ դեռեւ անցյալ տարվա հունիսին Դանիայի ֆինանսական շրջանների պարբերական «Ֆինանստիդենտէ»-ն, փորձելով առարկել ամերիկյան տնտեսական լրտեսութեան դեմ, գրում էր. «օգնութիւնը հսկելու համար ստեղծված հանձնաժողովների կողմից ցուցաբերվող արտակարգ հարցասիրութիւնն անհանգրստութիւն է առաջ բերում: Եվրոպական արտաքին գործերի միջնիստութիւնները և կառավարման օրգաններն այնքան են ծանրաբեռնված ամեն կարգի ամերիկյան անկետաներ լրացնելով, որ նրանց համար գրեթե ժամանակ չի մնում այլ գործերի համար»: ԱՄՆ-ի միջամտութիւնը արեւմտա-եվրոպական երկրների, նույն թվում Ֆրանսիայի ներքին գործերին այն աստիճանի ջննդիկութեան է հասել, որ ամերիկյան միսիաները լրտեսական բնույթի ամեն կարգի տեղեկութիւնների հավաքումը կատարում են օրը ցերեկով, կառավարութիւնների դիւի վրայով, առանձին ձեռնարկութիւնների իջեցնելով հրահանգներ ու անկետաներ և պահանջելով արտադրական ու առևտրական գործունեության մասին հաշվետւութիւններ: Ամերիկյան ո՞ր ձեռնարկութիւնը կամ ընկերութիւնն է, որ բուն ԱՄՆ-ում այդ կարգի հաշվետւութիւններ է տալիս ամերիկյան իշխանութիւններին:

Ֆրանսիայի հետ կնքված ամերիկյան համաձայնագրի 9-րդ հոդվածը ոչ միայն բավարարութիւն է տալիս ամերիկյան մոնոպոլիստներին, այլև ջուր է խմում ֆրանսիական աջ սոցիալիստների ու ֆրանսիական ժողովրդի գործի մշուս դավաճանների սրտից: Բանն այն է, որ ամերիկյան իմպերիալիստները եվրոպական երկրների վրէն փաթաթելով իրենց «բարերարութիւնը», միշտ աչքի առաջ ունեն ոչ միայն ԱՄՆ-ը վերահաս ճգնաժամից փրկելու ապարդշուն նպատակները, այլև արեւմտա-եվրոպական երկրների աշխատավոր մասսաների շահագործումը համերժացնելու իրենց պլանները: Այս տեսակետից հատկանշական է 9-րդ հոդվածը, ըստ որի ֆրանսիական կառավարութիւնը պարտավորվում է փոխհատուցում տալ Ֆրանսիայում շահ ունեցող ամերիկյան քաղաքացիներին՝ այն վնասների համար, որոնք կծագեն կառավարութեան միջոցառումներից և կշոշափեն նրանց գույքն ու շահերը: Կարճ ասած, ամերիկացիները լայն իրավունքներ են ստանում մի-

ջամտելու ոչ միայն Ֆրանսիայի տնտեսական գործերին, այլև նրան, որ կանխեն Ֆրանսիայում տնտեսության մասնավորապես այն ճյուղերի ազգայնացումը, որոնց մեջ ամերիկյան մոնոպոլիստները կստեղծեն իրենց օջախները: Ամերիկյան տերերը սաստում են իրենց եվրոպական կամակատարներին, չլինի, թե վերջիններս աշխատավորության դրությունը բարելավող որևէ սոցիալական փոփոխություններ մտցնեն իրենց երկրներում:

Ամերիկայի Միացյալ Նահանգների կողմից եվրոպական պետություններին, այդ թվում նաև Ֆրանսիային, ցույց տրվող «տնտեսական օգնությունը» պահանջում է ոչ միայն ծնկաշոք հնազանդություն վաշինգտոնի առաջ, այլև այն, որ «օգնություն» ստացող պետություններն ամենամեծ առավելության իրավունք տան ինչպես ԱՄՆ-ին, այնպես էլ նրանց կողմից օկուպացված տերիտորիաներին, այսինքն՝ Արևմտյան Գերմանիային, Ճապոնիային և Հարավային Կորեային՝ ամերիկյան մարիոնետային «կառավարություն» գլխավորությամբ: Ինչպես Միացյալ Նահանգներից կախման մեջ գտնվող մյուս երկրներում, այնպես էլ Ֆրանսիայում ամերիկյան տերերի կողմից եվրոպային հրամցրած այս պարտավորությունը դայրույթի մեծ ալիք առաջացրեց: Եվ դրանում զարմանալի ոչինչ չկա, քանի որ այդ առաջարկությունը Ֆրանսիային և Եվրոպայի մյուս երկրներին փաստորեն պարտավորեցնում է ամեն կերպ աջակցել նախկին թշնամի պետությունների էկոնոմիկայի առաջնահերթ վերականգնմանը, ըստ որում, ինչպես հայտնի է խոսքը վերաբերում է ոչ թե տնտեսության խաղաղ ճյուղերի, այլ աշխարհին տիրելու ամերիկյան նոր հավակնորդների կողմից նախապատրաստվող ագրեսիայի տնտեսական բազայի՝ դադարադրյունաբերական պոտենցիալի վերականգնմանը:

Այդպիսին է ԱՄՆ-ի և Ֆրանսիայի միջև կնքված այսպես կոչված երկկողմանի համաձայնագրի իսկական էությունը, որը ամելի ճիշտ, ինչպես նկատում է Ֆրանսիական թերթերից մեկը, ԱՄՆ-ի միակողմանի թելադրանքն է Ֆրանսիային, որը ընդհանուր ոչինչ չունի իրավահավասար պետությունների իսկական տնտեսական համագործակցության հետ: Կավ ըմբռնելով Մարշալի պլանով Ֆրանսիային «օգնություն» ցույց տալու համար ԱՄՆ-ի հետ կնքված «երկկողմանի» համաձայնագրի ստրկացուցիչ էությունը, Ֆրանսիայի աշխատանքի ընդհանուր կոնֆեդերացիայի տնտեսական

հետազոտությունների բյուրոն հայտարարում է, որ այդ ախտահարող համաճարագիրը ոչ այլ ինչ է, եթե ոչ «Ֆրանսիական ֆինանսական և դրամական քաղաքականության նկատմամբ խակական հակողությունը ամերիկացիների ձեռքը վերցնելը»:

Դժվար է պատկերացնել ավելի կոպիտ միակողմանի դիկտատ, քան այսպես կոչված Մարշալի պլանով «օգնություն» ցույց տալու համար ամերիկյան «երկկողմանի համաճարագիրը»: Ֆրանսիական «Լիբերասիոն» թերթը տալով այդ պայմանագրի գնահատականը գրում էր, որ Բիդոյի (Ֆրանսիայի այդ ժամանակվա արտաքին գործերի մինիստր) կողմից ստորագրված փաստաթուղթը «միայն հեգնորեն կարելի է անվանել «երկկողմանի»»: «Միակողմանի բառը, իհարկե, ավելի է սազում նրան, քանի որ այդ համաճարագիրն ամբողջովին թելադրված է Վաշինգտոնի կառավարության կողմից և ավելի շուտ նման է պարտված ազգերին առաջադրված պայմանագրերի, քան թե երկու իրավահավասար ազգերի միջև կնքված համաճարագրի...: Առանց այն էլ արդեն կրճատված ամերիկյան օգնությունն ստանալու համար, — շարունակում է թերթը, — մենք ստիպված ենք ընդունել մի շարք հորվածներ, որոնք բացարձակապես խախտում են մեր ազգային սովերենությունը և մեր երկիրն իջեցնում են տնտեսական խնամակալության տակ գտնվող ազգի վիճակին»: Առանց շափազանցության նույնը կարելի է ասել այն բոլոր երկրների մասին, որոնք խճավել են Մարշալի պլանի «երկկողմանի համաճարագրերի» ճիշտներում:

Այսպես, ամերիկյան իմպերիալիզմը վերահաս աճափսոսական ճգնաժամից խուսափելու, իր աշխարհակալական քնորքներով տարված 16 պետությունների և մյուս մասնակիցների վզին փաթաթեց իր «երկկողմանի համաճարագրերը», այդ պետություններին կապելով ամերիկյան մոնոպոլիստների խաղաղության, դեմոկրատիայի և սոցիալիզմի դեմ կազմակերպվող խաչակրած արշավանքի հետ, արշավանք, որը անխուսափելիորեն դատապարտված է ձախողման:

Ինչպես տեսնում ենք միջազգային առևտրի առաքարեղում ԱՄՆ-ի կողմից արևմտա-եվրոպական երկրների վզին փաթաթած պայմաններն այն են, որ ամերիկյան մոնոպոլիստների առաջ անառարկելիորեն բացվում են այդ երկրների շուկաների դարբասները: ԱՄՆ-ի հետ մրցակցող երկրների մաքսային դրույքները նշա-

նախադիրքին պետք է իջնեն, այն դեպքում, երբ ԱՄՆ-ի մաքսային
 դրույքները կամ մնում են անփոփոխ և կամ ամերիկյան կոնգրես-
 սի կողմից կարող են է՛լ ավելի բարձրացվել: Խտրականության և
 անհավասարության քաղաքականությունը կապված ամերիկյան
 «օգնության» հետ դրսևորվեց նաև «երկկողմանի համաձայնա-
 դրերի» ժամկետների հարցում: Արևմտա-եվրոպական պետություն-
 ներից յուրաքանչյուրը Մարշալի պլանով իր վրա պարտավորու-
 թյուններ է վերցնում 5 տարի ժամկետով, մինչդեռ ինչպես հայտնի
 է ինքը Մարշալի պլանը, ըստ կոնգրեսի որոշման ուժի մեջ է ըն-
 դամենը 15 ամիս և ԱՄՆ-ը իրենց պահանջները մյուսների վրին
 փաթաթելով 5 տարի ժամկետով, նրանց հանդեպ իրենց վրա
 «պարտավորություններ» են վերցնում միայն 15 ամսով: Սրանից
 դուրս ամեն ինչ կախված է ամերիկյան կոնգրեսի կամքից, նա
 կարող է հաստատել կամ մերժել Մարշալի պլանով 15 ամսի
 շրջանակներից դուրս ֆինանսավորումը: Այդ շարաքաստիկ «երկկող-
 մանի» համաձայնագրերը պարունակում են այնպիսի հոդվածներ,
 որոնք սահմանափակում են արևմտա-եվրոպական երկրների տըն-
 տեսական դժվարությունները մեղմացնելու հնարավորություննե-
 րը: Ամերիկյան տերերն արգելում են Արևելյան Եվրոպայի պետու-
 թյունների հետ լայն առևտուր անել: Անգլիական «Մանչեստեր
 դարդիան» թերթն այս առթիվ գրում էր. «Այդ սխտեմի համաձայն
 մենք պարտավորվել ենք ԱՄՆ-ից ստացված նյութերից կամ նրանց
 նման նյութերից պատրաստված ապրանքները շարտահանել»: Իսկ
 այս նշանակում է, որ ԱՄՆ-ը սահմանափակել են Անգլիայի տըն-
 տեսական սուվերենությունը, և «երկկողմանի» համաձայնագրի ու-
 ժով իրենց իրավունք են վերապահել Անգլիայի սեփական արտա-
 հանման համար լիցենզիա տալը կամ չտալը: Այսպիսով այն ել-
 կրքները, որոնք Մարշալի պլանի համաձայն «օգնություն» են
 ստանում՝ արտածման և ներմուծման բնագավառում զրկվել են
 իրենց տարրական սուվերեն իրավունքներից: Այդ երկրներն իրենց
 արտադրանքը վաճառել կամ գնել կարող են ոչ թե իրենց, այլ ամե-
 րիկյան մոնոպոլիստներին ձեռնառու պայմաններով: Ամերիկյան
 «օգնությունը» մոնոպոլիստն չի տվել նաև իր կլիենտների սուվե-
 րենության սահմանափակումը արժույթային և ֆինանսական գոր-
 ծարքների բնագավառում:

Մարշալի պլանի առնչությամբ, 1948 թ. փետրվարի 28-ին

սովետական պրոֆմիսյունների հրապարակած դեկլարացիայի մեջ
ասված է, որ ամերիկյան կառավարող շրջանների «օգնություն»
ցույց տալու պարտադիր պահանջներից մեկն էլ այն է, որ արևմը-
տա-եվրոպական երկրները պետք է հրաժարվեն իրենց սովերեն
իրավունքներից՝ ինքնուրույնաբար սահմանելու որևիցե արտա-
դրական պլան: Այսուհետև այդ պլանները պարտադիր կարգով
պետք է համաձայնեցվեն ամերիկյան վարչության հետ:

Կարող է հարց առաջանալ, ինչո՞ւ անգլիական, ֆրանսիական և
մյուս կառավարություններն ընդունեցին ամերիկյան «օգնության»
այդ ստրկացուցիչ պայմանները: Ընդունեցին «նրա համար, որ
նրանց համաձայնությունը պայմանավորված է ոչ միայն, ավելի
ճիշտ ոչ այնքան տնտեսական բնույթի պատճառներով, որքան եվ-
րոպան կառավարելու անդրօվկիանոսյան հավակնորդների վստա-
հությունը ամեն գնով ձեռք բերելու ձգտմամբ: Հենց դրանով կարե-
լի է քաջատրեւ ամերիկյան վարկերի նոր հոսանքի վրա հույս դնող
Անգլիայի և Ֆրանսիայի կառավարող շրջանների հետագա բոլոր
տնտեսական հաշիվների այդպես խիստ աչքի դարձող առանձնա-
հատկությունը»^{*}):

Ամերիկյան «օգնության» շնորհիվ պետությունների ազդային
սովերենության սահմանափակմանն ու ոտնահարմանը զուգըն-
թաց տեղի է ունենում այդ երկրների ազդային էկոնոմիկայի քայ-
քայտով, որն իր հերթին տանում է դեպի ժողովուրդների մասսայա-
կան աղքատացումը: Բելգիայի վարչապետ Սպաակը գովերգելով
Մարշալի պլանը ի վիճակի չեղավ թաղցնել այն հանգամանքը, որ
1949 թ. հունվարին փոքրիկ Բելգիայում արդեն 300 հազար գործա-
զուրկ կար: Բելգիական թերթերը մատնանշում են երկրի էկոնո-
միկայի լուրջ վատթարացումը: Ինչպես մատնանշում են թերթերը,
բացի տեքստիլ, գործվածքեղենի, կաշվի, կոշիկի, ապակու, փայ-
տամշակման և կարի արդյունաբերությունից, որտեղ վաղուց ար-
դեն նկատվում է արտադրության խիստ անկում, ձգնաժամը շո-
շափել է նաև արդյունաբերության այնպիսի ճյուղեր, ինչպես մե-
քենաշինությունը, մետաղաձուլությունը, աղամանդի արտադրու-
թյունը և նավաշինությունը: Ձգնաժամը տարածվել է նաև արտա-

^{*}) „Большевик“, № 15, стр. 47, 1947 г.

քին առևտրի վրա և բնակչության գնողունակության անկման պատ-
ճառով նաև ներքին առևտրի վրա:

Ողբալի օրեր է ապրում Իտալիայի էկոնոմիկան: Մարշալի պլանը Իտալիայի վրա տարածելու հետևանքով նրա էկոնոմիկան ապրում է տնտեսական ծանր ճգնաժամ: Այժմ արդյունաբերության մակարդակը 1938 թվի մակարդակի 65—70 տոկոսն է կազմում, իսկ արդյունաբերության կարևոր ճյուղերի ձեռնարկությունների ճնշող մեծամասնությունն աշխատում է իր կարողության 45—50 տոկոսի չափով: Արժեքազրկումը և գների աճը հասցրել են սպառ-
ման հնարավոր սահմանափակմանը և բնակչության կյանքի ցածր մակարդակին: Ամերիկյան «օգնության» մեկ տարին Իտալիային տվեց 700 հազար նոր գործազուրկներ, որոնց թիվն այժմ կազմում է ավելի քան 2 միլիոն մարդ: Իտալական նավաշինարանները դա-
դարում են գործելուց, մինչդեռ Իտալիայի դե-Գասպերիի կառավա-
րությունը ԱՄՆ-ից վերջերս գնել է 105 «Աիբերտի» տիպի նավ: Նույն բախտին է արժանացել նաև մնացած պետությունների ազ-
գային էկոնոմիկան, որոնք կորցրել են իրենց տնտեսական սովե-
րենությունը: Գնահատելով ԱՄՆ-ի մոնոպոլիաների միջամտությու-
նը Շվեդիայի ներքին գործերին և Շվեդիայի էկոնոմիկայի ծանր վիճակը, որ առաջացել է ամերիկյան «օգնության» պատճառով, շվեդական սոցիալ-դեմոկրատական «Արքեյտեր Բլադետ» թերթի գլխավոր խմբագիր Ինգվե Սելլերը գրում է, թե ԱՄՆ-ի պահանջը Արևելյան Եվրոպայի հետ Շվեդիայի առևտուրը սահմանափակելու մասին հանդիսանում է «անթույլատրելի միջամտություն սովերեն երկրի գործերին»:

Ամերիկյան «օգնությունը» և Ֆրանսիա թափանցած ամերիկ-
յան կապիտալը քայքայում են Ֆրանսիայի ազգային էկոնոմիկան,
և Ֆրանսիային դուրս են մղում իրեն գաղութներից: «Ամերիկա-
ցիներն իրենց ձեռքը դրել են Արևմտյան Աֆրիկայում Ֆրանսիա-
յին պատկանող հարուստ երկաթահանքերի և Հյուսիսային Աֆրի-
կայի նավթի վրա: Մադագասկարից արդեն ԱՄՆ են փոխադրում
19.800 տոննա դրաֆիտ, որը կարևոր ստրատեգիական հումք է
հանդիսանում»*):

Ամերիկյան «օգնությունը» ռեակցիոն գործիչների ու մամուլի

*) Газ. „Правда“ от 21-го февраля 1949 г.

կողմից գովերգվեց որպէս տնտեսական վերականգնման միջոց, բայց իրականում բացարձակ հակառակ հետեանք ունեցաւ: Այդ «օգնութիւնը» հասցրեց տնտեսական դժվարութիւնների աճմանը և էլ ամէլի սրեց տնտեսական ու սոցիալական հակասութիւնները, ինչպէս բուն ԱՄՆ-ում, այնպէս էլ «մարշալականացված» երկրներում:

Միացյալ Նահանգները, ի թիւի մնացած պահանջների, ամերիկյան «օգնութիւն» թակարդն ընկած երկրների վրէժն փաթաթեցին սպառազինումների պլանները, որոնք համապատասխանում են ամերիկյան խմբերիալիզմի ազդեցիկ պատերազմի նախապատրաստման ծրագրերին և բխում են տխրահռչակ «Հյուսիս-Ատլանտյան» պաշտանադրով ԱՄՆ-ի վասսալների դեպի իրեն ունեցած ստրկական հնազանդութիւնից: Վերջին հաշիւով ստացվեց այնպէս, որ արեւմտա-եվրոպական երկրների կողմից սպառազինութիւնների համար կատարվող ծախսերը ակնառու կերպով գերազանցում են ԱՄՆ-ից «օգնութիւն» կարգով ստացված դամարներից: Հենց այս փաստը նմանապէս վկայում է այն մասին, որ ամերիկյան օգնութիւն մասին եղած քարոզը ստոր խաբեութիւն է:

Գաղութատեր պետութիւնները և նրանց թվում առաջին հերթին Անգլիան իր լեյքսդիստական կառավարութեամբ, այն համոզմունքն ունեն, թէ ամերիկյան «օգնութիւնը» կնպաստի ամրացնելու իրենց սեփական դիրքերը գաղութային ու կախյալ երկրներում: Իրականում ամերիկյան օգնութիւնը հանդիսացաւ որպէս միջոց պայթեցնելու ուրիշ երկրների գաղութների դարբասները ամերիկյան մոնոպոլիստների առաջ: Այս բոլորից հետո դժվար չէ համոզվել, որ ամերիկյան խմբերիալիզմը «օգնութիւն» պատրվակի տակ անպատկառորեն ոտնահարում է Մարշալի պլանի մեջ ներգրավված երկրների սովերեն իրավունքները, այդ երկրներում ամերիկյան մոնոպոլիստների համար ստեղծվում են իրավական արտոնութիւնների սխառեմ, որը սահմանում է կիսագաղութային ուժիւ: Մերկացնելով ամերիկյան գաղութարարների պլանները Ֆրանսիայի Կոմունիստական պարտիայի Կենտրոնական կոմիտեն մատնանշում է որ Ֆրանս-ամերիկյան «երկկողմանի» համաձայնագրերը «սահմանափակում են Ֆրանսիայի ազգային սովերենութիւնը, հարվածի տակ են դնում նրա դրամական սխառեմը, սպառնում են

Ֆրանսիական արդյունաբերությանը, գյուղատնտեսությանը և առևտրին, հրամանագրում են իջեցնել մաքսային պոշլինան, ամերիկյան կապիտալիստներին արտոնություններ են տալիս և նրանց ձեռքն են հանձնում ֆրանսիական միության հարատվությունները, Ֆրանսիան վեր են ածում ամերիկյան դաշուլի»*):

ՍՈՒՎԵՐԵՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ ՆՐԱ ԴԵՄ

Ամերիկյան խմբերիալիզմի և նրա եվրոպական կամակամարների «հերթական հարձակումը սովերենության՝ ազգային ինքնորոշման ազատության և անկախության մեծ սկզբունքների իրավաբանական արտահայտության դեմ, — առում է ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի թղթակից-անդամ, իրավաբանական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Ե. Ա. Կորոլինը, — բուլդոզիմ էլ չի հանդիսանում պատահական էպիզոդ կամ առանձին պետական ու բազմազան գործիչների կամքի շար արտահայտություն, այդ ժամանակակից խմբերիալիզմի տիպիկ արտահայտություններից մեկն է, որը քնորոշ է նրա եռապատերազմյան փուլին»:

Սովերենության դեմ կազմակերպված նոր արշավի և նրա ժամանակակից դերեզմանափոփոխների «թեորիաների» իսկական էությունը հասկանալու համար անհրաժեշտ է ծանոթանալ սովերենության կոնկրետ բովանդակության հետ պատմական զարգացման տարբեր փուլերում:

Միջազգային իրավական թեորիայի տեսակետից սովերենությունը հանդիսանում է պետության անկախությունն ու ինքնուրույնությունը, ինչպես ներքին, այնպես էլ արտաքին հարաբերությունների մեջ:

Դասակարգային հասարակարգի զարգացման տարբեր փուլերի ժամանակ սովերենությունն ունեցել է տարբեր դասակարգային իմաստ և հասկացողություն:

«Սովերենություն» տերմինը և հասկացողությունը ծագել են ֆեոդալիզմի դարաշրջանում թագավորական իշխանության կողմից ֆեոդալների, Հռոմի պապի և հռոմեական սրբազան կալստության դեմ մղված պայքարում: Այդ դարաշրջանում սովերենության հաս-

*) Журн. «Большевик» № 14, стр. 58, 1948 г.

Ապացուցութեանն արտահայտում էր բացարձակ միապետի, սուլերենի անսահմանափակ գերիշխանութիւնը:

Ֆեոդալական մասնատվածութեան պայմաններում թագաւորական իշխանութիւնը՝ միասնական ազգային պետութեան սուլերենութեան համար մղած պայքարում հանդես էր գալիս որպէս առաջադեմ տարր: Բազմիշխանութեան դեմ մղած պայքարում բացարձակ միապետը հանդես էր գալիս, որպէս «կարգի ներկայացուցիչը անկարգութեան մեջ»:

Եկեղեցու և ֆեոդալների դեմ մղված պայքարում պետական թագաւորական իշխանութեան ամրապնդման համար մղվող պայքարը ավելի շուտ ավարտվում է Ֆրանսիայում: Դեռևս 14—15-րդ դարերում թագաւորական իրավաբանների (լեգիստների) կողմից մշակվում է եկեղեցին թագաւորին ենթակայութեան դիտութիւնը, գիտութիւնն այն մասին, որ «ամեն մի բարոն սուլերենն է իր կալվածքում, (ճԱՐՈՒՄԱ), բայց թագաւորը բարձր սուլերենն է, բոլորի նկատմամբ»:

16-րդ դարում հանդես է գալիս Ժ. Բոդենի թեորիան միապետի սուլերենութեան մասին: Ըստ Բոդենի, սուլերենութիւնը թագաւորի բացարձակ, ոչ մի օրենքից կախումն չունեցող իշխանութիւնն է: Թագաւորի իշխանութիւնը տարածվում է եկեղեցու, ֆեոդալների և բոլոր հպատակների վրա, որոնք պարտաւոր են ենթարկվել թագաւորի իշխանութեանը:

Դասակարգային հասարակութեան զարգացման հաջորդ փուլում սուլերենութեան հասկացողութիւնն աստանում է նոր բովանդակութիւն, միշտ մնալով դասակարգային: Ինչպէս ամբողջ միապետական կարգերն՝ իրենց իդեոլոգիական վերնաշէնքով, այնպէս էլ միապետութեան դարաշրջանի սուլերենութեան հասկացողութիւնն արդեւակում են հասարակութեան հետագա պրոգրեսիվ առաջխաղացումը: Դեպի իշխանութիւն ձգտող երիտասարդ բուրժուազիան, որպէս միապետութիւնից կապիտալիզմին անցման ժամանակաշրջանի առաջադեմ դասակարգ, առաջ է քաշում սուլերենութեան մասին իր հասկացողութիւնը, որը լիովին համապատասխանում է բուրժուազիայի դասակարգային շահերին:

Մանր բուրժուազիայի գաղափարախոս Ժան-Ժակ Ռուսսոն իր

«Հասարակական պայմանագիր» աշխատության մեջ առաջ է քաշում «Ժողովրդական սովերենության» գաղափարը, որը բուրժուական ուղղությանների դադարի դարաշրջանի սովերենության հասկացողությունն է: Ժան-ժակ Ռուսսոյի սովերենության մասին ուսմունքի ելակետը մարդ-անհատի բնական ազատության և պետության պայմանագրային կազմավորման թեզն է: Ռուսսոն իր աշխատությունն սկսում է «մարդը ծնված է ազատ, սակայն նա ամենուրեք շղթայված է» բառերով և կոչ է անում շտկել այդ անիրավացիությունը ժողովրդին իր ազատությունները վերադարձնելու միջոցով: Մանր բուրժուազիայի գաղափարախոս Ռուսսոն գտնում է, որ մարդիկ իրենց բնական անքակտելի իրավունքները պաշտպանելու համար համաձայնության են գալիս պետական իշխանության կազմակերպման վերաբերյալ:

«Ժողովրդական սովերենության» այս բուրժուական թեորիան սովերենության էությունը դիտում է, որպես «Ժողովրդի» գերիշխանության և անկախության արտահայտություն, բուրժուազիայի դասակարգային շահերը նույնացնելով ժողովրդի շահերի հետ:

Ժան-ժակ Ռուսսոն գտնում էր, որ պետական իշխանությունը պետք է արտահայտի հանրության կամքը: Հասարակության ամեն մի անդամ, ասում է Ռուսսոն, մասնակցում է ընդհանուր կամքի կազմավորմանը, ենթարկվելով ընդհանուր կամքին, այսինքն պետական իշխանությանը, ինքը ենթարկվում է իրեն, և ուր մարդը կորցնելով իր բնական իրավունքը ձեռք է բերում քաղաքացիական իրավունք: Ելնելով «ընդհանուր կամքի» իր ուսմունքից Ռուսսոն գտնում էր, որ սովերենությունը կարող է ելնել միայն ժողովրդից, սովերենությունը չի կարող օտարացվել կամ փոխանցվել, որից հետո հանգում էր այն սխալ հետևությանը, թե հասարակարգի քաղաքական կառուցվածքը պետք է բնորոշի հասարակական հաստատությունները: Մինչդեռ իրականում ճիշտ հակառակն է, այսինքն հասարակական հարաբերություններն են որոշում հասարակարգի քաղաքական կառուցվածքը: Ռուսսոյի գաղափարներն իդեալիստական էին և արտահայտում էին մանր բուրժուազիայի շահերը:

Բուրժուազիան օգտագործեց «Ժողովրդական սովերենության»

գրոշը՝ իշխանությունը նվաճելու համար և ռևոլուցիայի մեջ ներգրավեց ժողովրդական լայն մասսաներին:

Իշխանության գլուխ անցնելուց հետո բուրժուազիան աստիճանաբար ամրապնդելով իր դիրքերը, իրեն զգալով պրության տերն ու տնօրենը, նոր բովանդակություն է մտցնում բուրժուական ռևոլուցիայի շրջանում իր իսկ առաջ քաշած լուղունքների մեջ: Եթե բուրժուական ռևոլուցիաների «ժողովրդական սուվերենությունը» ժողովրդական չէր և չէր էլ կարող լինել բուրժուական հասարակարգի դատակարգային սահմանափակության պատճառով և նրա սկզբունքներից շատերը գործնական կիրառում չստացան ոչ ներքին կյանքում և ոչ էլ արտաքին հարաբերությունների ապարեզում, ապա բուրժուական կարգերի հաստատումից հետո, երբ բուրժուազիան դադարեց առաջադեմ դատակարգ լինելուց, սուվերենության հասկացողությունն ապրեց իր նոր փոփոխությունները և բուրժուական իրականության պայմաններում սուվերենության հասկացողությունը քանի դեպ, այնքան ավելի՝ ու ավելի երերվեց ու ամորձատվեց:

Սուվերենության աստիճանական բովանդակազրկումը ընթացել է տարբեր ձևով: «Խնամակալվող» պետությունների ստեղծման կապակցությամբ բուրժուական իրավագիտության մեջ հանդես եկավ նոր թեորիա, ըստ որի սուվերենությունը պետության պարտադիր հատկանիշը չէ և որ կարող են լինել նաև ոչ սուվերեն պետություններ: Սուվերենության այս թեորիան պետք էր հենց իմպերիալիստական պետություններին՝ իրենց համաշխարհային իրավաբանորեն հիմնավորելու համար:

Իմպերիալիզմի շրջանի առանձնահատկությունների թվին են պատկանում անկախ պետություններին ֆինանսապես առավել հզոր երկրներին ենթարկելը, ուրիշ ժողովուրդների ազգային անկախությունը ռախահարելը: Իմպերիալիզմի պայմաններում պետությունների անկախության սուվերենության սահմանափակումը տեղի է ունենում տարբեր մեթոդներով ու եղանակներով՝ անհավասար պայմանագրերի, ազդեցության շրջանների, պրոտեկտորատների, կոնցեսիաների, «երաշխավորությունների», վարձակալության, փոխառությունների, մանդատների և այլնի միջոցով:

Երկրորդ համաշխարհային պատերազմի նախապատրաստման շրջանում սուվերենության դեմ ծավալված պայքարը ագրեսիվ պե-

տությունների համաշխարհային արդարացման նախապատրաս-
տումն էր: Մինչև հիտլերյան Գերմանիայի ագրեսիայի ծավալումը
նրա «թեորետիկները» հանդես եկան նոր «սեմոնքով» ասելով, թե
«նա է հանդիսանում սուվերեն, ով վերջինն է որոշում» և որ «Սվ-
րոպայում շափաղանց մեծ թվով պետութայուններ պետք է կրճատ-
վեն, իսկ նա ով կմնա, չպետք է խնդրուրույն լինի»:

Երկրորդ համաշխարհային պատերազմն ավարտվեց սովե-
տական հզոր պետության կողմից գլխավորած դեմոկրատական ու-
ժերի հաղթանակով: Հիտլերյան Գերմանիան ի վիճակի չեղավ ի-
րադրոժել սուվերենության մասին իր նոր «տեսությունը»: Բաց
երկրորդ համաշխարհային պատերազմը բոլորովին չվերացրեց
խմբերիալիստական հակասությունները, բնահակառակը է՛լ ավելի
խորացավ կապիտալիզմի հիմնական հակասությունը՝ հասարակա-
կան արտադրության և մասնավոր իրացման միջև: Կապիտալի-
կենտրոնացումը և համակենտրոնացումը նոր թափ ստացավ ետ-
պատերազմյան շրջանում, ըստ որում դա տեղի է ունենում կապի-
տալիստական երկրների պետական մեքենայի ակտիվ ներգործ-
մամբ:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը միջազգա-
յին իրադրության մեջ արձանագրեց էական փոփոխություններ,
որոնք բնութագրվում են միջազգային թատերաբեմում գործող քա-
ղաքական հիմնական ուժերի նոր տեղաբաշխմամբ, պատերազ-
մում հաղթանակ տարած պետությունների հարաբերությունների
փոփոխմամբ և նրանց վերախմբավորմամբ: Պատերազմից հետո
ձևավորվեցին երկու հակադիր քաղաքական ուղղություններ:
ՍՄԽ-ի կողմից գլխավորվող դեմոկրատական ուժերի վարած
քաղաքականության նպատակն է քայքայել խմբերիալիզմի ուժերը,
ստեղծել հարատև դեմոկրատական կայուն խաղաղություն: ԱՄՆ-ի
ու Անգլիայի կառավարող շրջանների քաղաքականություներ հե-
տապնդում է խմբերիալիզմի ուժեղացմանը և ամրապնդմանը, դե-
մոկրատիայի տապալմանը, նոր երրորդ համաշխարհային սպան-
դի կազմակերպմանը, նպատակ ունենալով հաստատել անգլո-ա-
մերիկյան խմբերիալիզմի համաշխարհային տիրապետություն:
ԱՄՆ-ի կողմից ղեկավարվող խմբերիալիստական քաղաքակա-
նությունը «նկատի ունի ռազմական, տնտեսական և քաղաքական
կարգի միջոցառումների լայն ծրագիր, որոնք հետապնդում են

ԱՄՆ-ի էքսպանսիայի օրեկա հանդիսացող բոլոր երկրներում ԱՄՆ-ի քաղաքական և տնտեսական տիրապետություն հաստատելու խնդիրը, այդ երկրները ԱՄՆ-ի արբանյակներ դարձնելու, այնտեղ այնպիսի ներքին ռեժիմներ հաստատելու խնդիրը, որոնք վերացնեն ամերիկյան կապիտալի կողմից այդ երկրները շահագործելու դեմ բանվորական և դեմոկրատական շարժման հարուցած ամեն տեսակ խոչընդոտները»*):

Ամերիկյան իմպերիալիզմը համաշխարհային տիրապետության հասնելու համար, պատերազմից հետո, սկսեց ոտնձգությունների մի ամբողջ շարան ուրիշ ժողովուրդների ազատության ու անկախության դեմ: Նա իր առաջնահերթ խնդիրներից մեկը համարեց ազդերի սուվերենության սահմանափակումը և վերացումը, այդպիսին դիտելով այն խոչընդոտներից մեկը, որոնք կանդնած են ամերիկյան իմպերիալիզմի տնտեսական ու քաղաքական էքսպանսիայի ճանապարհին: Ամերիկյան տնտեսական «օղնությունը» Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և այլ պետությունների ազդային սուվերենության դեմ սկսած հարձակման միջոցներից մեկն է: Սուվերենության ամերիկյան գերեզմանափորների «թեորիական» հիմքը տվեց ամերիկացի Բերնխեմը, որն իր «Համաշխարհային տիրապետության համար» դրքում գրում է. «Պետք է ընդունել, որ խաղաղությունը չի կարող արտաքին քաղաքականության նպատակ լինել: Անհրաժեշտ է հրաժարվել ազդերի համասարության մասին մեռած ուսմունքի վերջին մնացորդներից, և ԱՄՆ-ը պետք է բացարձակ կերպով առաջ քաշեն իրենց թեկնածությունը համաշխարհային տիրապետության համար... Անհրաժեշտ է ձեռք քաշել ուրիշ երկրների ներքին գործերին չմիջամտելու սկզբունքներից»**):

Դժվար չէ նկատել, որ սուվերենության ամերիկյան «թեորիան» հիտլերյան Գերմանիայի աշխարհին տիրապետելու «ուսմունքի» ամերիկյան վարիանտն է:

Ազդերի անկախության ու սուվերենության դեմ նույնաձեռնած իր արշավի մեջ թշնամին մեծ դեր է հատկացնում իր գաղափարա-

*) Տես Ա. Ա. Ժգանովի գեղուցումը միջազգային դրության մասին. «Պարտիսկան կյանք» ամսագիր № 5, էջ 12, 1947 թ.:

**) „Правда“ № 77, от 18 марта 1949 г.

խոսական զինանոցի աշխուժացմանը: Այս տեսակետից բոլորովին պատահական չէ, որ հետպատերազմյան ժամանակաշրջանում ամերիկյան իմպերիալիզմի դադափարախոսության մեջ մեծ տեղ է հատկացվում բուրժուական կոսմոպոլիտիզմին: Բուրժուական կոսմոպոլիտիզմը ամերիկյան իմպերիալիզմի կողմից ազգերի սուվերենության դեմ նախաձեռնած ոտնձգությունների կարևոր դիմադրից մեկն է: Կոսմոպոլիտիզմը կոչված է մարդկանց մեջ մեկնելու այն հոգևոր ազնիվ զգացմունքները, որոնք քաղաքացուն անքակտելիորեն կապում են մայր հայրենիքի հետ: Կոսմոպոլիտիզմը 20-րդ դարի ամերիկյան իմպերիալիզմի «ափիոնային պատերազմն» է ժողովուրդների հայրենասիրության դեմ: Կոսմոպոլիտիզմը հետապնդում է աշխատավորական մասսաների դադափարական զինաթափումը ամերիկյան իմպերիալիզմի հարձակման առաջ: Ուստի և պայքարը կոսմոպոլիտիզմի դեմ ամեն մի հայրենասերի սրբազան պարտականությունն է, որովհետև այդ պայքարը պայքար է ազատության ու անկախության համար:

«Սուվերենության ամերիկյան թեորիան», կոսմոպոլիտիզմը, «Տրումենի դոկտրինան», «Մարշալի պլանը», Հյուսիս-Ատլանտյան պակտը ամերիկյան իմպերիալիզմի համաշխարհային տիրապետություն հաստատելու պլանների իրագործման միևնույն զինանոցի դորժիքներն են:

Ահա թե ինչու «պայքարը «Տրումենի դոկտրինայի» և «Մարշալի պլանի» դեմ դարձել է հայրենասիրական պարտքին, հայրենիքին, նրա ազատությանն ու սուվերենությանը նվիրվածության համանունը (СИНОНИМ)»^{*}):

ՍՍՌՄ-Ի ՊԱՅՔԱՐԸ ՀԱՆՈՒՆ ՍՈՒՎԵՐԵՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ

Ամերիկյան իմպերիալիստների կողմից գլխավորվող ռեակցիոն լազերի՝ ազգերի սուվերենության այդ դերեզմանափորի դեմ հանդիման կանգնած է սոցիալիզմի ու դեմոկրատիայի լազերը՝ Սովետական մեծ տերության գլխավորությամբ: Սովետական պետությունն իր գոյության ամբողջ ժամանակաշրջանում համառ պայքարել ու պայքարում է բոլոր ազգերի ու ժողովուրդների ա-

^{*}) «Правда», от 6-го марта 1948 г.

դատության ու անկախության համար: Ազգերի սուվերենության նկատմամբ Սովետական պետության կիրառած անշահախնդիր քաղաքականությունը բխում է սովետական տերության արտաքին քաղաքականության ինտերնացիոնալիստական բնույթից, սոցիալիստական պետության բուն էությունից:

Ազգերի սուվերենության գերեզմանափորների դեմ մղած պայքարում ՍՍՏՄ-ը միայնակ չէ: Ի դեմս Ժողովրդական դեմոկրատիայի երկրների և ամբողջ աշխարհի ազատասեր ժողովուրդների ու առաջին հերթին բանվոր դասակարգի — կոլբուրական կոմպարտիաների գլխավորությամբ, Սովետական Միությունն ունի իր հավատարիմ դաշնակիցները:

Սովետական Բանակը ժողովուրդների ազատության իր միասիայի իրադործմամբ ոչ միայն վերականգնեց Փաշիզմի կողմից ոտնահարված կենտրոնական ու Հարավ-Արևելյան Եվրոպայի ժողովուրդների անկախությունը, այլև խորացրեց ու ամրապնդեց այդ երկրների սուվերենությունը:

Սովետական իրավագիտությունը դանում է, որ սուվերենությունը, «տվյալ պետական իշխանության անկախության վիճակն է, ամեն մի ուրիշ իշխանությունից, այդ պետության ինչպես ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս»):

Սովետական Միության և նրա դաշնակից Ժողովրդական դեմոկրատիայի երկրների համար հանուն սուվերենության մղվող պայքարը — պայքար է ոչ միայն պետությունների իրավահավասարության և ներքին ու արտաքին դործերում ունեցած անկախության համար, այլ պայքար է նախ և առաջ պետությունների ներքին կյանքի անկաշկանդ կառուցման համար, որն ազատ լինի արտաքին մեկն կարգի միջամտությունից:

Դեմոկրատական լազերի կողմից սուվերենության համար մղած պայքարը՝ պայքար է հանուն միջազգային ապարեզում ժողովուրդների բարեկամության, համակեցության, հանուն կոլեկտիվ անվտանգության, հարատև, կայուն, դեմոկրատական խաղաղության: Սովետական պետության սուվերենության համար մղված պայքարում ցուցաբերած սկզբունքներն իրենց ցայտուն

*) Академикос А. Я. Вышинский „Советское государство и право“ № 6, стр. 8, 1948 г.

արտահայտութիւնն են գտնում միջազգային տնտեսական օգնութիւն ցույց տալու և ստանալու բնագավառում:

Ընկ. Վ. Մ. Մոլոտովը բնութագրելով միջազգային համագործակցութեան բնագավառում եղած երկու հակադիր ուղղութիւնները ասել է՝ «Համագործակցութեան մեկ տեսակը հիմնված է իրավահավասար պետութիւնների միջև քաղաքական և տնտեսական հարաբերութիւնների զարգացման վրա, երբ այդ պետութիւնների ազգային սովերենութիւնը չի տուժում օտարերկրյա միջամտութիւնից: Այդպիսին է միջազգային համագործակցութեան գեմոկրատական սկզբունքը, որը ժողովուրդներին մերձեցնում է մեկը մյուսի հետ և հեշտացնում է փոխադարձ օգնութեան գործը նրանց մեջ: Գոյութիւն ունի միջազգային համագործակցութեան մեկ այլ տեսակը, որը հենվում է մեկ կամ մի քանի ուժեղ տերութիւնների մյուս պետութիւնների նկատմամբ գերիշխելու գրույթի վրա, պետութիւններ, որոնք ընկնում են հպատակեցված, ինքնուրույնութիւնից զրկված պետութեան վիճակը»:

Սովետական պետութիւնը միջազգային հարաբերութիւնների մեջ միշտ էլ ելել է բոլոր մեծ ու փոքր, թույլ և հզոր պետութիւնների իրավահավասարութեան և փոխադարձ հարգանքի ըսկըգրոնքից:

Բնութագրելով սովետական կառավարութեան միջազգային համագործակցութեան նկատմամբ ունեցած վերաբերմունքը ընկ. Մոլոտովը շարունակում է՝ «Դրականորեն վերաբերվելով միջազգային համագործակցութեան զարգացմանը պայմանավորված կողմերի իրավահավասարութեան և փոխադարձ շահերի հարգման ըսկըգրոնքի վրա, սովետական կառավարութիւնը չի կարող օգնել ում էլ որ լինի իր գործերը հարդարել ուրիշների հաշիվին, ավելի թույլ կամ փոքր պետութիւնների հաշիվին, քանի որ այդ ոչինչ ընդհանուր չունի պետութիւնների միջև նորմալ համագործակցութեան հետ»:

Այնուհետև խոսելով սովետական կառավարութեան տնտեսական համագործակցութեան բնագավառում վարած քաղաքականութեան մասին, ընկ. Մոլոտովը նշում է, որ «Սովետական Միութիւնը կողմնակից է եւրոպական և մյուս երկրների միջև իրավահավասարութեան և ազգային սովերենութեան փոխադարձ հարգանքի առողջ սկզբունքների վրա՝ տնտեսական համագործակցութեան ա-

մեն տեսակ զարգացմանը և ինքը անփոփոխաբար աջակցել է և պետք է աջակցի այդ բանին»^{*}):

Սովետական Միության Կոնքառ միջազգային պայմանագրերը և տնտեսական համաձայնագրերը ընկ. Մոլոտովի թեզիսների փայլուն ապացույցն են: Ժողովրդական դեմոկրատիայի երկրները և ԱՄՆ-ի միջև կնքված տնտեսական պայմանագրերն ու համաձայնագրերը բարձր փահափայլեցին այդ երկրների ժողովուրդների կողմից, որպես անշահախնդիր, ժողովուրդների անկախությունն ու սովերենությունը հարգող միջազգային փաստաթղթերի:

Ռումինական «Տիմպուլ» թերթը Ռումինիայի և Սովետական Միության միջև պայմանագիր կնքելու կապակցությամբ գրել է՝ «Հավատարիմ Յալթայում ընդունված որոշումներին, որոնց նպատակն է ապահովել ժողովուրդների ազատ դեմոկրատական զարգացումը Սովետական Միությունն իր շուրջն է համախմբում բոլոր նրանց, ովքեր չեն ցանկանում զիջել իրենց ազգային սովերենությունը»:

Ռումինիայի ժողովրդական ռեսպուբլիկայի Մինիստրների կոնգրեսի Նախագահ Պետրու Գրոզան հայտարարել է՝

«Քենեդիստիմուս Ստալինը թող իմանա, որ ռումինական ժողովուրդը երբեք չի մոռանա այն մեծահոգությունը, որ մեզ հնարավորություն տվեց կրախից, սարսափելի կրախից հետո առաջ ընթանալ վերականգնման ուղիով, ընթանալ անկախության ուղիով, այն ուղիով, որը ռումինական ժողովրդին հնարավորություն տվեց իր երկրում դառնալ տեր ու տնօրեն»^{**}):

ԱՄՆ-ի և Չեխոսլովակիայի միջև կնքված տնտեսական համաձայնագիրը Չեխոսլովակիայի նախկին վարչապետ, այժմյան պրեզիդենտ Գոտվալդի կողմից փահափայլեց, որպես «ըմբռնման և անշահախնդիր բարեկամության նոր ապացույց... որպես մեծահոգի որոշումներ, որոնք նոր դարաշրջան են բացում Չեխոսլովակիայի ռեսպուբլիկայի և Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության միջև տնտեսական և առևտրական հարաբերությունների ասպարեզում»:

*) Տես «Правда» թերթի 1947 թվի հուլիսի 3-ի համարը:

**) Տես «Սովետական Հայաստան» թերթի 1948 թվի փետրվարի 10-ի հա-

Սովետական Միության հետ կնքված տնտեսական պայմանագրերի սուանձնահատկությունն այն է, որ նրանք կաշույնություն են մտցնում այն պետությունների էկոնոմիկայում, որոնք տնտեսական սերտ համագործակցության մեջ են գտնվում ՍՍՌՄ-ի հետ: Այս գործում վճռական դերը պատկանում է սոցիալիստական տերության տնտեսության պլանայնությանը: Դրա համար էլ Սովետական տնտեսական համաձայնագրերը մեծ ներդրում են պետությունների էկոնոմիկայի վերականգնման և համընդհանուր խաղաղության ամրապնդման գործում:

Վերջին մի քանի տարվա տնտեսական համագործակցության պատմությունը անվիճելիորեն ապացուցում է սովետական կառավարության իր ժամանակին արած հայտարարության բացարձակ ճշտությունը այն մասին, որ Մարշալի պլանով ամերիկյան «օգնություն» ստացող պետություններն անխուսափելիորեն վերածվելու են ամերիկյան խմպերիալիզմի էքսպանսիայի գործիքի և ամերիկյան «օգնությունը» կոչված է ոչ թե վերականգնելու այդ պետությունների էկոնոմիկան, այլ շատ թե քիչ հետաձգելու ԱՄՆ-ի ամբողջ էկոնոմիկայի վերահաս տնտեսական ճգնաժամը, որի ուրվականը վաղուց ի վեր սարսուռ է առաջ բերում ամերիկյան կառավարող մոնոպոլիստական շրջաններում:

Այլ արդյունքի հասան Սովետական Միության հետ տնտեսական ամուր կապերի մեջ գտնվող երկրները: Վերջիններս օգտվելով Սովետական Միության կողմից այդ պետությունների նկատմամբ ցուցաբերած բացարձակ հարգանքի քաղաքականությունից, անցած տարիների ընթացքում ձեռք բերեցին վիթխարի հաջողություններ: Այդ մասին է վկայում Չեխոսլովակիայի, Լեհաստանի, Բուլղարիայի և Ժողովրդական դեմոկրատիայի մյուս երկրների տնտեսական պլանների կատարումն ու վերակատարումը, որը հնարավոր եղավ միայն և միայն տնտեսական համագործակցության սովետական սկզբունքների կիրառման շնորհիվ:

Փոխըմբռնման վրա հիմնված «տնտեսական հարաբերություններ հաստատելու և տնտեսական համագործակցության քաղաքականություն իրականացնելու շնորհիվ Ժողովրդական դեմոկրատիայի երկրները և ՍՍՌՄ-ը հնարավորություն ստացան արագացնելու իրենց ազգային տնտեսության վերականգնումն ու զարգացումը»: Իրենց հավասարակշռությունը կորցրած խմպերիալիստական

ԱՄՆ-ի և Անգլիայի կառավարությունները «բռնկոտում են առե-
տրական հարաբերությունները ժողովրդական դեմոկրատիայի և
ՍՍՌՄ-ի հետ, որովհետև վերջիններս հնարավոր չեն համարում
ենթարկվել Մարշալի պլանի թելադրանքին, քանի որ այդ պլանը
խախտում է երկրների սովերենությունը և նրանց ազգային էկո-
նոմիկայի շահերը»։ Հաշվի առնելով այդ հանգամանքը ժողովրդա-
կան դեմոկրատիայի երկրները և ՍՍՌՄ-ը իրենց միջև տնտեսա-
կան ավելի լայն համագործակցություն հաստատելու նպատակով
1949 թ. հունվարին որոշեցին «ստեղծել տնտեսական փոխօգնու-
թյան խորհուրդ», որի մեջ մտնող բոլոր երկրները օգտվում են
միեւնույն իրավունքներով, իրավահավասար ներկայացուցչության
հիման վրա։ ՍՍՌՄ-ի առաջարկությամբ ստեղծված «տնտեսական
փոխօգնության խորհուրդը որոշումներ է ընդունելու միմյան շա-
հագործված երկրների համաձայնության առկայության դեպ-
քում»*)։

Այս խորհրդի կազմի ընտրությունը, նրան մասնակցող պե-
տությունների իրավունքների լիակատար հավասարությունը մեկ
անգամ ևս ցույց են տալիս, թե ինչպես է Սովետական Միության-
ը անշեղորեն իրագործում երկրների իրավահավասարության և
ազգային սովերենության փոխադարձ հարգման առողջ սկզբունք-
ների վրա կառուցված միջազգային տնտեսական համագործակ-
ցության սովետական սկզբունքները։

*) Տես «Սովետական Հայաստան» թերթի 1949 թվի հունվարի 26-ի համարը։

Պատ. խմբագիր՝ Ն. ԳԱՍՊԱՐՈՎ
Տեխն. խմբագիր՝ Վ. ԳԱՎԹՅԱՆ
Սերագրիչ՝ Ն. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՎՖ 03662

Պատվեր № 650

Տիրաժ 3500

Հանձնված է արտագրության 16/VIII 1949 թ.

Ստորագրված է տպագրության 10/IX 1949 թ.

Տպագրական 2 մամուլ։

Հայպոլիգրաֆհրատի վարչության № 2 տպարան, Երևան, Կոմունյանցի
փող. № 86, 1949 թ.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0016274

104
9166 1.000.000.

ЦЕНА

11
9918